ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 10) 58 24 13

ֆաքս (+ 374 10) 52 68 44

էլ. փոստ minister@moh.am

______________N ________________

Ձեր N ______________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ

ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ուսումնասիրելով Ձեր 25.11.2014թ. թիվ 37/37.2/19751-14 գրությամբ ներկայացված իրավական ակտերի նախագծերը՝ հայտնում եմ.

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ).

1. «ատամնաբուժական» բառը փոխարինել «ստոմատոլոգիական» բառով՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի 276-Ն որոշումը.

2. Նախագծի Գլուխ 11-ի՝

1) 1-ին նախադասությունից հանել «կենտրոնների» բառը, նկատի ունենալով, որ համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1275-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի, ստոմատոլոգիական պոլիկլինիկան, որը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա ուսումնական հաստատության կլինիկական բազա է, կոչվում է ստոմատոլոգիական կենտրոն: Ստոմատոլոգիական կենտրոնը կարող է լինել միայն մեկ ուսումնական հաստատության կլինիկական բազա,

2) հանել «ռենգտենաբանական» բառը, նկատի ունենալով, որ ստոմատոլոգիական գործունեության համար լիցենզավորված բոլոր անձինք ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1275-Ն որոշման հավելված 1-ի 5-րդ կետի համաձայն, պետք է ունենան «ռենգտենաբանական» բժշկական օգնության և սպասարկման տեսակը, բայց այդ գործունեությունը իրականացվում է նաև այլ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում, ուստի այդ դրույթի առկայությունը տարընթերցում է առաջացնում,

3.Նախագիծը համապատասխանեցնել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի հետ ընդունված «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքին:

4.Նախագիծը համապատասխանեցնել օրենսդրական տեխնիկայի պահանջներին:

Կից ներկայացվում է Նախագծերի վերաբերյալ առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Իրավաբանական վարչություն
Հեռ.565 681

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային հարկի մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն  և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 372-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու վերաբերյալ հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի փետրվարի 25-ի N 28 որոշումն ուժը կորցրած

ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2014 թվականի հունվարի 22-ի N 18-Ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության մի շարք համատեղ հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանների, «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 1994 թվականի մայիսի 6-ի N 08003, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 1994 թվականի մայիսի 6-ի N 10-6-7, Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության 1994 թվականի մայիսի 6-ի N 01362/3-2զ և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչության 1994 թվականի մայիսի 6-ի համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ էկոնոմիկայի նախարարի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահի համատեղ հրամանի և «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 1994 թվականի օգոստոսի 30-ի N 17-7/4, Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչության 1994 թվականի օգոստոսի 30-ի N 02527/3-4 և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 1994 թվականի օգոստոսի 30-ի N 17-7/4 համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի համատեղ հրամանների նախագծերի ընդունման դեպքում

Վերը նշված նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ